



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի չորրորդ եռամսյակում (վերլուծություն)

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 59533 գործարք, որոնց քանակը 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 22.7 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 25.4 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 16902 օտարման գործարքի 77.6 %-ը կազմել է առուվաճառքը, 22.1 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.5 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.1 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի չորրորդ եռամսյակում, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 23.7 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 34.7 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի չորրորդ եռամսյակում, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.7 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 40.9 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	չորրորդ եռամսյակ 2016 թ.	չորրորդ եռամսյակ 2017 թ.	երրորդ եռամսյակ 2017 թ.
Կենտրոն	428250	459300	452800
Արաբկիր	357400	346000	342800
Քանաքեռ-Զեյթուն	283300	267400	267300
Նոր Նորք	254400	232500	229600
Ավան	262000	249000	247500
Էրեբունի	252500	237600	236300
Շենգավիթ	258050	243800	240300
Դավթաշեն	277100	257000	251200
Աջափնյակ	251400	230000	226500
Մալաթիա-Սեբաստիա	244300	233900	230400
Նուբարաշեն	157600	158700	156000
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	275100	265000	261900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել են 1.2 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1303 բնակարան, որի քանակը, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.1 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 26.8 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		չորրորդ եռամսյակ 2016 թ.	չորրորդ եռամսյակ 2017 թ.	երրորդ եռամսյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116200	106000	105000
	Ապարան	58900	59300	59000
	Թալին	66900	62700	62000
Արարատ	Արտաշատ	99200	92700	91300
	Մասիս	115800	99850	99900
	Վեդի	101750	90500	90500
	Արարատ	77750	78700	77900
Արմավիր	Վաղարշապատ	154200	120000	122300
	Արմավիր	121250	91600	92300
	Մեծամոր	87600	69400	70000
Գեղարքունիք	Սևան	99400	81500	79400
	Գավառ	60800	51300	52000
	Մարտունի	107700	108200	108300
	Վարդենիս	45400	46100	46100
	Ճամբարակ	28800	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	77000	81000
	Ստեփանավան	74900	66700	66700
	Սպիտակ	99950	88700	88600
	Այվերդի	55950	47300	49200
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	30000	30000
Կոտայք	Աբովյան	155150	154300	149500
	Նոր Հաճն	128550	119300	119300
	Բյուրեղավան	108250	93800	92300
	Եղվարդ	110000	107100	106500
	Հրազդան	63900	56000	56000
	Ծաղկաձոր	292400	288000	288000
	Չարենցավան	85500	72300	73000
Շիրակ	Գյումրի	109450	86300	87700
	Արթիկ	67400	66300	67600
	Մարալիկ	41150	42300	42300
Սյունիք	Գորիս	124100	125000	124700
	Կապան	95700	97000	96000
	Սիսիան	92400	90300	89300
	Մեղրի	83600	92000	90000
	Քաջարան	95000	99500	98800
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	91400	92000
	Եղեգնաձոր	126500	120400	120800
	Զերմուկ	113300	98000	99000
Տավուշ	Դիլիջան	115700	110000	110800
	Իջևան	118600	113000	110600
	Բերդ	60600	62000	62000
	Նոյեմբերյան	50500	52000	51000
	Այրում	31900	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականի չորրորդ

եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1562 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 481 գործարք, մարզերում՝ 1081 գործարք: 2017 թվականի չորրորդ եռամսյակում, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 0.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ աճել 9.1 %-ով, մարզերում՝ նվազել 4.3 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 28.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 41.5 %-ով, իսկ մարզերում՝ 23.7 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	չորրորդ եռամսյակ 2016 թ.	չորրորդ եռամսյակ 2017 թ.	երրորդ եռամսյակ 2017 թ.
Կենտրոն	476350	476800	476000
Արաբկիր	383200	382100	380000
Քանաքեռ-Զեյթուն	295300	283100	283100
Նորք-Մարաշ	319500	302750	300200
Ավան	270750	263000	262100
Էրեբունի	239900	234100	243100
Շենգավիթ	255150	230000	230000
Դավթաշեն	276200	270000	268400
Աջափնյակ	250300	240800	240000
Մալաթիա-Սեբաստիա	238200	234400	243000
Նուբարաշեն	150800	150000	150000
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286900	278800	279600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ նվազել են 0.3 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	--------------------

		չորրորդ եռամսյակ 2016 թ.	չորրորդ եռամսյակ 2017 թ.	երրորդ եռամսյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136250	130400	130000
	Ապարան	60050	51300	51000
	Թալին	69250	66000	66000
Արարատ	Արտաշատ	100100	97000	97000
	Մասիս	115100	110100	110100
	Վեդի	102300	90600	90600
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153150	148100	149000
	Արմավիր	107000	99000	99950
Գեղարքունիք	Սևան	94950	92000	92950
	Գավառ	57100	53800	54100
	Մարտունի	96200	95000	95000
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	32000
Լոռի	Վանաձոր	100900	97800	98600
	Ստեփանավան	91200	82000	82800
	Սպիտակ	114050	108000	108000
	Ալավերդի	50300	50800	50500
	Տաշիր	51900	45000	45000
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Արուսյան	157350	156000	155200
	Նոր Հաճն	129800	127300	126000
	Բյուրեղավան	120500	109900	110000
	Եղվարդ	116100	109000	109000
	Հրազդան	82600	71000	71000
	Ծաղկաձոր	305000	300000	300000
	Չարենցավան	83000	80000	80000
Շիրակ	Գյումրի	119350	116000	116000
	Արթիկ	63450	60400	60400
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130050	128000	128000
	Կապան	100800	101500	100900
	Սիսիան	96500	96700	95600
	Մեղրի	84700	89500	88500
	Դաստակերտ	11610	11810	11810
Վայոց ձոր	Վայք	90150	88100	88100
	Եղեգնաձոր	116750	114000	114000
	Ջերմուկ	131300	129300	129000
Տավուշ	Դիլիջան	115800	115000	115000
	Իջևան	123250	120200	120200
	Բերդ	60100	57000	57000
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 6340 միավոր (7426.09 հա) հող, որից Երևանում՝ 345 միավոր (35.02 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 3681 միավոր (7015.28 հա), որից Երևանում՝ 33 միավոր (7.43 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1773 միավոր (164.82 հա), որից Երևանում՝ 158 միավոր (9.85 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 704 միավոր (77.63 հա), որից Երևանում՝ 143 միավոր (9.99 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 121 միավոր (123.93 հա), որից Երևանում՝ 10 միավոր (1.75 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 34 միավոր (10.11 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 27 միավոր (34.32 հա), որից Երևանում՝ 1 միավոր (6.00 հա):

2017 թվականի չորրորդ եռամսյակում օտարված հողերից 5397 միավորի (6855.90 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 284 միավոր (26.79 հա), նվիրատվության գործարք՝ 911 միավոր (568.03 հա), որից Երևանում՝ 47 միավոր (7.82 հա) և փոխանակության գործարք՝ 32 միավոր (2.16 հա), որից Երևանում՝ 14 միավոր (0.41 հա):

Հանրապետությունում 2017 թվականի չորրորդ եռամսյակում, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 53.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 47.4 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 62.6 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 3.0 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 3536.80 հա, որից 3499.48 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 32.8 %-ը կամ 1768 միավորը (1478.88 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 74 միավոր (2.96 հա), իսկ 66.7 %-ը կամ 3598 միավորը (5274.64 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 206 միավոր (23.76 հա): 2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 31 գործարք (102.38 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2017 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակ. կառուցապ. հողեր						բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակ. կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	4	0.87	28	0.77	42	1.33	22	3.81	6	0.88	105	6.31	72	6.76
Արագածոտն	145	343.21	10	0.73	22	2.79	40	3.22	342	434.01	1	0.01	71	9.01	11	0.69
Արարատ	150	347.31	11	3.85	65	4.55	37	1.65	371	259.27	3	8.97	162	14.24	17	0.44
Արմավիր	40	40.55	6	8.78	13	1.44	25	1.29	343	3458.93	11	3.13	206	22.25	13	0.39
Գեղարքունիք	35	30.73	14	3.69	66	7.83	93	12.63	380	225.95	2	2.04	47	6.68	12	3.24
Լոռի	31	71.11	7	0.92	26	0.31	43	0.71	158	100.33	0	0.00	30	3.75	10	0.61
Կոտայք	195	370.86	5	1.13	231	17.14	76	2.46	405	318.55	11	7.16	241	20.37	37	4.01
Շիրակ	24	38.53	0	0.00	21	1.06	22	1.55	119	118.52	0	0.00	29	3.60	2	0.20
Սյունիք	20	29.09	4	1.54	15	0.13	15	1.12	58	65.37	2	0.24	32	2.60	13	1.08
Վայոց ձոր	59	76.66	8	2.40	21	1.42	21	0.89	53	58.50	1	0.44	21	2.14	6	0.46
Տավուշ	17	11.08	8	1.73	13	0.77	16	1.06	127	82.65	0	0.00	31	3.60	2	0.04
Ընդամենը	716	1359.13	77	25.64	521	38.21	430	27.91	2378	5125.89	37	22.87	975	94.55	195	17.92

Ստորև ներկայացված է 2017 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

Ընդամենը	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր					
			բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի			
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	46	1.72	3	0.86	20	0.39	23	0.47	28	1.24	0	0.00	1	0.01	8	0.37	19	0.86
Արագածոտն	5	0.16	1	0.13	2	0.02	2	0.01	204	280.67	137	274.09	9	0.60	20	2.77	38	3.21
Արարատ	15	3.41	1	3.16	6	0.03	8	0.22	236	253.09	138	246.44	10	0.69	59	4.52	29	1.44
Արմավիր	7	0.121	1	0.001	1	0.03	5	0.09	76	51.87	39	40.47	5	8.78	12	1.42	20	1.20
Գեղարքունիք	18	1.08	1	0.07	4	0.20	13	0.81	189	53.79	34	30.71	13	3.63	62	7.63	80	11.82
Լոռի	23	0.63	1	0.50	10	0.05	12	0.08	79	22.43	26	21.11	6	0.42	16	0.27	31	0.63
Կոտայք	34	0.62	1	0.05	23	0.51	10	0.06	464	365.15	186	345.04	4	1.08	208	16.63	66	2.40
Շիրակ	14	0.13	0	0.00	5	0.02	9	0.11	53	41.01	24	38.53	0	0.00	16	1.03	13	1.45
Սյունիք	12	1.37	1	1.23	9	0.05	2	0.09	40	29.94	18	28.53	3	0.31	6	0.08	13	1.02
Վայոց ձոր	2	0.014	0	0.00	1	0.01	1	0.004	106	81.36	58	76.66	8	2.40	20	1.41	20	0.89
Տավուշ	8	0.11	0	0.00	5	0.08	3	0.03	46	14.53	17	11.08	8	1.73	8	0.69	13	1.03
Ընդամենը	184	9.37	10	6.00	86	1.39	88	1.97	1521	1195.08	677	1112.66	67	19.65	435	36.82	342	25.95

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 39 գործարք (246.49 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի չորրորդ եռամսյակում, 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.1 անգամ: Ընդ որում, Երևանում նվազել է 24.3 %-ով, իսկ մարզերում աճել է 3.3 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.9 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 3.0 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 2.5 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 3.7 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	115	263.12	40.1	2352.8	282.8	209	169.07	365.0	12000.0	3481.6
Ապարան	8	2.95	111.0	2453.0	416.0	12	3.90	86.5	2727.3	672.7
Թալին	13	7.96	41.4	400.2	158.7	49	183.45	93.6	5494.5	689.5
Ծաղկահովիտ	1	0.05	1540.0	1540.0	1540.0	35	74.14	79.5	1000.0	442.5
Արարատի մարզ										
Արտաշատ	88	44.33	70.6	4519.1	755.7	141	43.31	335.1	10833.3	2730.4
Մասիս	15	45.75	59.5	998.6	270.4	58	29.92	200.0	11904.8	3378.0
Վեդի	35	156.36	17.8	2481.5	535.2	163	184.19	207.0	10795.1	1939.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	10	20.19	64.8	2284.8	243.9	170	110.60	294.3	9090.0	1538.2
Բաղրամյան	16	16.67	70.9	709.0	134.4	69	3275.61	90.6	2561.1	790.0
Վաղարշապատ	13	3.61	65.5	3190.0	889.6	97	68.95	444.4	11764.7	2132.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	2.32	185.1	331.7	258.4	202	59.59	199.8	1875.0	552.5
Ճամբարակ	6	6.73	344.8	17500.0	3374.4	6	9.61	60.5	953.3	352.0
Մարտունի	6	4.35	53.2	356.0	258.2	12	2.08	51.1	2850.0	728.3
Սևան	2	0.25	250.0	2200.0	1225.0	117	42.63	52.2	2134.8	380.2
Վարդենիս	18	17.07	118.2	1666.7	372.5	42	109.25	41.2	2575.1	362.2
Լոռու մարզ										
Ալավերդի	7	1.66	630.3	2513.6	1972.0	27	13.41	170.4	6424.2	546.7
Գուգարք	15	11.76	172.8	1581.9	1074.2	39	11.09	234.6	6065.9	819.2
Սպիտակ	1	0.49	279.6	279.6	279.6	4	2.16	250.0	5555.5	645.0
Ստեփանավան						21	17.80	90.6	1686.6	421.5
Տաշիր	3	7.20	506.0	536.5	516.2	61	52.49	45.3	1384.4	189.2
Կոտայքի մարզ										
Արվյան	54	159.53	76.1	1639.1	389.8	137	69.48	279.3	11942.7	3879.5
Եղվարդ	77	114.80	70.0	1875.4	495.2	187	158.51	174.4	11971.8	2541.8
Հրազդան	55	70.71	80.9	3750.0	627.7	66	68.10	130.5	10256.4	1145.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2.69	124.6	329.5	229.5	39	42.52	252.0	1693.1	737.7
Ամասիա						10	16.56	40.9	261.0	147.4
Անի	2	3.42	88.3	269.1	178.7	32	30.25	110.6	546.9	475.9

Աշոցք	2	0.04	7000.0	7000.0	7000.0	2	1.46	58.5	215.8	144.0
Արթիկ	16	32.38	47.2	660.2	297.3	31	26.84	79.4	1428.6	537.5
Սյունիքի մարզ										
Գորիս						10	21.12	92.6	1023.2	659.5
Կապան	7	20.73	77.0	473.0	235.6	3	1.43	120.0	841.6	467.5
Մեղրի	3	1.32	1200.0	3740.0	2893.3	11	2.55	193.0	3000.0	870.0
Սիսիան	8	6.48	69.0	219.6	129.8	31	39.26	46.3	1977.4	495.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	57	72.74	18.7	1539.3	184.6	30	26.85	125.0	10000.0	1859.0
Վայք	1	3.92	25.5	25.5	25.5	23	31.65	58.8	1430.7	656.7
Տավուշի մարզ										
Բերդ	4	1.51	217.5	360.4	307.8	23	6.11	213.3	3783.8	751.7
Իջևան	8	8.11	43.7	466.5	253.9	15	7.46	267.5	9454.5	1640.0
Նոյեմբերյան	5	1.46	330.5	670.9	541.7	88	68.69	46.7	7368.4	1090.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	15	19496.8	205.1	2266.2	584.2	56	63479.4	130.7	22200.0	2596.0
Ապարան	3	3864.0	268.0	909.7	475.9	6	8821.5	124.1	609.6	390.0
Թային	2	4327.0	151.2	151.2	151.2	5	9228.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						2	4820.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	40	39189.4	416.7	1617.5	593.7	52	49801.6	173.9	7140.3	902.0
Մասիս	10	2434.6	1425.9	6065.0	2887.1	72	52613.7	187.5	25000.0	1203.3
Վեդի	9	3571.2	155.5	2315.0	794.5	38	40003.0	126.1	5000.0	663.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	12	14163.8	850.6	3528.0	2189.3	79	99929.0	131.6	9090.9	1216.3
Բաղրամյան						5	5162.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						116	112172.7	197.4	26528.4	1529.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	22	25612.6	125.1	193.8	157.4	7	13572.0	186.6	1084.3	683.0
Ճամբարակ	1	1500.0	104.0	104.0	104.0	4	3215.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	16	17323.0	122.2	377.1	219.6	19	22431.9	119.3	5000.0	277.0
Սևան	4	620.7	244.4	1742.7	1353.6	11	15669.7	240.0	3110.4	353.3
Վարդենիս	19	31206.2	240.3	341.0	331.0	6	11911.6	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	3	1063.7	161.8	4200.0	1408.2	9	16591.2	114.3	1388.9	217.0
Գուգարք	11	380.7	2105.4	3528.3	2305.7	10	8137.3	77.9	14083.3	1258.3
Սպիտակ						6	6358.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան	1	1180.0	580.8	580.8	580.8	3	2965.3	88.2	1666.7	176.0
Տաշիր	1	39.0	561.5	561.5	561.5	1	777.7	45.3	400.0	90.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	55	22048.3	342.5	5302.8	2744.3	125	103683.9	264.5	35353.5	1959.3
Եղվարդ	135	137233.6	212.0	5037.5	1288.6	101	91450.6	173.6	27000.0	2851.6
Հրազդան	18	6994.6	416.7	4976.4	2029.4	15	8598.0	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	4372.1	233.0	5232.6	1891.0	15	12889.7	113.6	18750.0	333.2
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	1203.6	73.3	73.3	73.3	3	8357.0	67.9	180.6	216.2
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	5	4758.0	133.2	2750.3	1771.7	10	14272.0	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս						9	5084.7	112.2	1700.0	364.0
Կապան	4	548.6	1020.0	1275.0	1119.4	6	3467.0	67.9	2638.9	390.0
Մեղրի	1	62.0	900.0	900.0	900.0	5	4351.6	68.5	632.9	270.0
Սիսիան	1	193.0	359.0	359.0	359.0	12	13050.0	123.5	875.0	263.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	17	13018.4	72.0	432.1	291.1	18	17588.0	96.7	7659.6	504.4
Վայք	3	1124.1	468.6	1050.0	760.9	3	3850.0	120.7	1448.3	253.5
Տավուշի մարզ										
Բերդ						5	4732.0	75.8	810.0	133.0
Իջևան	6	5196.8	1266.2	3000.0	1829.0	18	17605.3	74.1	14423.1	471.2
Նոյեմբերյան	2	1681.5	110.0	891.1	500.6	8	13672.5	125.0	1948.1	259.0

2017 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3251 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.5 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 96.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի չորրորդ եռամսյակում, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 44.1 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 68.5 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 102 բնակարանի, 66 անհատական բնակելի տան, 1209 հասարակական նշանակության, 239 արտադրական նշանակության օբյեկտի, 1603 միավոր հողի, և 32 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 31 վարձակալության գործարքի քանակը 2017 թվականի երրորդ եռամսյակի և 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 3.1 անգամ:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 17120.07 հա հողից 1.12 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 17118.95 հա հողից 16859.77 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 161.22 հա արդյունաբերական օբյեկտի, 2.97 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 6027.76 հա, որից 5996.08 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7658 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.9 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի երրորդ

եռամսյակի համեմատ, աճել է 29.4 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 7.0 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (53.2 %), անհատական բնակելի տների (22.3 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.0 %) և հողերի (8.7 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4459 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 27.9 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 27.6 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 2014.50 հա հող, որից 18.69 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.9 %-ը կամ 1952.27 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.32 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 1421.22 հա, որից 1416.71 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1395 գործարք, որից 1137-ը՝ Երևանում: 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 41.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 45.2 %-ով, մարզերում՝ 25.9 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 3.0 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.6 անգամ, մարզերում՝ 72.0 %-ով:

2017 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 8802 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2017 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 34.2 %-ով, իսկ 2016 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 26.0 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (24.2 %):

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե